

իւր անսիրոճ արուեստը: Սուլթանը կամարին եր-
 կրորդ գլուխը տեսնելով՝ այնպէս կը նեղսրտի,
 որ զՀրեայն ի սպառ կը մերժէ եւ «Միքայէլ
 կանչեցէք» կ'ըսէ: Միքայէլ կը փութայ եւ իրեն
 յանձնուած գործն այնպիսի կատարելութեամբ
 եւ ճիշդ նմանութեամբ կը յօրինէ, որ թագա-
 ւորն կամարը ձեռքն՝ չի կրնար երկու գլուխնե-
 րէն հինն ու նորը զանազանել: «Գիտէի, կ'ըսէ,
 Միքայէլիս ձեռքը». եւ իսկոյն յաջողութեան
 ժամը կը հնչէ. Միքայէլ իւր առաջին պաշտօնին
 մէջ կը հաստատուի: Բայց այս բաւական չէ՝ կը
 սկսի պաշտօնէ պաշտօն բարձրանալ: Տէրութեան
 փողերանոցն որ մինչեւ նոյն ատեն Հրէից ձեռքն
 էր, անոնց անհաւատարմութեանն համար կ'առ-
 նուի եւ Միքայէլի կը յանձնուի: Միքայէլ գիտնա-
 լով որ արհամարհեալ Հրէին ոխը գրեթէ ան-
 պարտելի է, չ'ուզեր այս պաշտօնն յանձն առ-
 նուլ: Բայց ի՞նչ ընելու էր. Սուլթանին անդարձ
 հրամանը կը ստիպէր...: Միքայէլ կը զիջանի եւ
 հոգւով ու մտօք այս նոր պաշտօնավարութեան
 կը սկսի: Բայց իւր գուշակութիւններն կը կա-
 տարուին, եւ մերժեալ Հրէից իւր ըրած այնչափ
 բարեացը փոխարէն՝ կը ժառանգէ քինախնդիր
 ռիսակալութեան դառն պտուղները: Միքայէլի
 հաւատարիմ սիրտը չի կրնար ռիսերիմներու
 զրապարտ ստութեանցն համբերել, եւ սրտի
 կսկիծէն ու վշտէն խելքը կը կորուսանէ: Սա-
 կայն վշտաց մէջ բարեացակամ մարդկան բարե-
 կամներ չեն պակսիր: Նազչի Պէյ՝ որ հզօր ազ-
 գեցութիւն մ'ունէր, իրողութիւնն եւ Միքայէլի